



ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ



(Ա. ՏԱՐԻ)


15 ՆՈՅԵՄԲԵՐ 1900

(ԹԻԻ 17)



ԲՈՎ Ա. ՆԴԱԿՈՒԹԻԻՆ

Յանանան սահմանագրութիւնը. Երուսնդ. Արմաքէշանլեան. — Գիտական արձագանգ (Իտիւրէ եւ Էնկերէ), Յ. Ս. Փափազեան. — Հայաստանի վիճակը. — « Բոս Առմենիա », . — Գաղթականները (Էր), Ե. Արմաքէշանլեան. — Կիսամեակ :



ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Չ Ա Ի Ի Ղ

Կը հրատարակուի ամէն ամսոյ 1ին եւ 15ին

Բ Ա ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Պուկարիոյ համար տարեկան 10 ֆր. , վեցամսեայ 5 ֆրանք :
Արատասհմանի » տարեկան 12 ֆր. , վեցամսեայ 6 ֆրանք :
Ամերիկայի » » 2 1/2 տոլար

“ՉԱԻԻՂ” ձեռքէ չի ծախուիր :

Բաժնեդին , նամակ , յօդուած , լրագիր և զիրք՝ պէտք է
ուղղուին հետեւեալ հասցէին՝

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH

PENSIONNAT ARMENIEN

(Bulgarie)

VARNA

Չհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան :

Շարիդի մէջ յայտարարուելու համար խրկուած հրատա-
րակութիւնները պէտք է երկու օրինակ ըլլան :

Շ Ա Ի Ի Ղ


ՀԱՆԳԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի	15 ՆՈՅԵՄԲԵՐ 1900	Թիւ 17
---------	------------------	--------

ՕՍՄԱՆԵԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ



«Պէտք է որ հայերը վերջնական որոշման մը յանդին. կա՛մ Սուլթանին միանալու են կամ Երիտասարդ-թուրքերուն յարելու են՝ յառաջդիմութեան յաղթանակին համար...»

Մէջվերեքի վերջին թիւը այս առ- ղերով կը վերջացնէ «Պաշտպանու- թիւն Սահմանադրութեան» խո- բագրով յօդուած մը, որուն մէջ կը ջատագովուի Միահագ բաշաի սահ- մանադրութիւնը, ցոյց տրուելով ան- հուն բարիքները, որոնցմէ ամէն ազգ- իր բաժինը պիտի ունենայ Թուր- քիոյ կայսրութեան ամէն կողմը, ու այն երկիրը ուր եղեռնագործու- թիւնը իտէալական բարձրութեան հասած է և ուր արիւնարբու աւա- զակներու սանձարձակ ջոխի բնիք ման կուգան անպատժութեան քսամնելի յաղթանակը պարտցնելով, պիտի դառնայ դրախտ մը երջանկութեան,

անդորրութեան, բեղմնաւորութեան եթէ... սահմանադրութիւնը յա- ջորդէ Սուլթան Համիտին Բոլոր այն քաշկռտուք ջատագովութիւնը զոր երիտասարդ-թուրքերը կընեն սահմանադրութեան համար, հաս- տատել ուզելով թէ հայերը թուրք տարրին հետ համահաւասար գետ- նի վրայ պիտի վայելն ազգային ու ընկերային ամէն իրաւասութիւն- ներ, արգահատանքի ժպիտ մը միայն կընայ գծագրել դէմքին վրայ հայերուն, որոնք ուսումնասի- րած իրենց երկիրը, քաջ տեղեակ տիրող բիրտ տարրին նկարագրին, անոր բարքերուն, սովորութեանցը, բմբռնումներուն, ու կընական ան- դրըգուելի ու կոյր նախապաշա- րումներուն որոնց հետ միս ու սա- կոյր դարձած է, քայլ մը չեն կըր- նար ետ ընկրկիլ անցուած շաղէն, քանի որ չեն ուզեր սուքի կոխան ընել իրենց ընտիրներուն դիակի ընտանման կոյտերը: Ու հայերը անսպթաք կերպով պիտի քալեն անցնին այդ աղէտալի ճամբան, ու- ռուն ծայրը կա՛մ Ոչնչացումի ուր-

ուսականը կեցած է կա՛մ փրկու-
թեան դիցուհին՝ վեհապանծ կեր-
պարանքով մը :

Երիտասարդ-թուրք կոչուած այս
մարդիկը անպատճառ ողորմելի
հայրենասէրներ են, ֆանատիկու-
ներ, զարգացումի չպարով մը սըն-
դուրունձ, ագէտ չհասկնալու սու-
տիճան թէ Սահմանադրութիւնը
թուրքիոյ համար պիտի ըլլայ մի-
միայն ինչ որ կանթեղի մը տար-
տամ ըյսը խաւարապատ անդունդի
մը համար : Սահմանադրութիւնը,
թուրքիոյ պէս երկրի մը մէջ գոր-
ծողութեամբ, մեծագոյն հաւանա-
կանութեամբ չպիտի կրնայ հզօր
ճառագայթումով մը լուսաւորել
հոն աիրող թոհուբոհը : Եւ արդէն
երբէք տեսնուած բան չէ որ ագէտ,
բարբարոս, բարոյապէս, մտաու-
րապէս, քաղաքականապէս յետին
ծայր նախնականութեան մէջ արդ-
մացած ցեղեր յարմար ըլլան ըն-
դունելու սահմանադրութիւնն ու
սանձահարուելու անոր լուծին տակ :
Մէկզի առնելով թուրքերը, որոնք
մեծ մասամբ ագէտ, ապուշ և ան-
ընդունակ ցեղ մը կը ներկայացնեն
տակաւին, փոքր-Սոխան բաղմամար-
դող միւս զանազան ցեղերը, քիւրա,
չէրքէզ, լազ, չէչէն, լէզքի, եզիտի
և այլն, ի՛նչպէս պիտի կրնան ըն-
տելանալ սահմանադրական կառա-
վարութեան մը քաղաքակրթիչ խր-
տութիւններուն և լուս ու մաւնջ
հանդուրժել այն կապերուն որոնք

պիտի գերանեն իրենց բարբարիկ,
աուպատակող, վաչկատուն, ըմբոս-
կեանքին բոլոր ազատ շարժումնե-
րը : Եւ ի՛նչ երաշխաւորութիւն
կայ որ, նոյն իսկ սահմանադրա-
կան օրէնքին գործողութեամբ,
վերջ պիտի գաննեն վայրի ցեղերու,
աշխրէթներու արիւնտա շահատու-
կութիւնները, այնպիսի երկրի մը
մէջ որուն բնական կողմուածքը ա-
մէն դիւրութիւն, ամէն միջոց կրն-
ձեռէ այդօրինակ վիճակի մը ան-
հուծօրէն յարստեւումներ : Հապա
խորամականութիւնը, որ իր կրօնա-
կան նուիրագործուած սուանդու-
թիւններովը, իր կոշկոճուած նա-
խապաշարումներովը, քաղաքակր-
թութեան նրբանքներուն անընտել
իր ընտելեամբը հսկայական պատա-
նէշ մը կը քաշէ կառավարական
դրութեան մը դէմ, որ մէկ հար-
ուածով մարդարէի փոխանորդ խա-
րիֆային ձեռքէն կը խլէ կրօնէ
բացարձակ միապետութեան բոլոր
իրաւունքները :

Ձիրենք նախատեսլու համար չեմ
ըսեր, բայց քիչ մը համոզումը ու-
նիմ թէ, թողունք վայրի ցեղերը,
երիտասարդ-թուրքերու ցանցառ
լէզէնն իսկ դեռ բոլոր յարմար
հանգամանքները չընծայեր սահմա-
նադրական կառավարութիւն մը
տանելու, ենթարկուելու անոր բա-
ցարձակ պայմաններուն : Վասն զի
բնաւ հաւանական չէ որ երիտա-

ստորգլխութեանը ուրիշ թիւքերէ բնապէս տարբերին. վարկորարողի զարգացում մը, եւրոպականացման կասկած մը, նուրբ ձեւերու կեդ ծիր մը, քաղաքական կիրք մը միացած ու խմորած են երիտաւ ստորգլխութեանը հանէ՛ այս բաները անոր վրայէն — և շատ դիւրութեամբ կարելի է հանել — ու դէմդ պիտի դռնես թիւք մը, բոլոր այն թիւքերուն պէս որոնք ծանրաշուք կերպով կը պարտին Այս-Սօփիա մզկիթին շուրջը, կախերես, դատան նայուածքով, մութումնդ, կեանքի ոխերիմ թշնամի :

Բոլոր Ահմէտ Բիզանիւրը, Հալիլ Կանէմները, Մահմուտ բաշաները այս տեսակ արարածներ են. մեր կացուր զիրենք իրենց ծպտումէն, ու, եթէ չես քաշուիր, սոքա մըն ալ սուր ձեռուրնին, ու պիտի տեսնես որ նախանձելի մրցակիցներ պիտի հանդիսանան Պոլսոյ փողոցներուն երբեմնի արիւնկզակ շահատակներուն : Ու երեւակայել որ այս տեսակ մարդիկ են որ կը պահանջեն գործադրութիւնը օտ. սահմանադրութեան, որուն հեղինակին Միահազ բաշայի կուսակալութեան օրով, անոր աչքին առջեւ, անոր ըռ մեղսակցութեամբը վազեցին արեան հեղեղները Պուլկաբիոյ մէջ :

Այս մարդիկն են ահա որ հիմա վճռական ձեւեր կառնեն մեզի հետ, ու կը հրամայեն .

« Կա՛մ մեզի հետ միացէ՛ք կա՛մ Սուլթանին : Ասկէց զատ փրկութիւն չիկայ ձեզի : »

Ընդունելով հանդերձ այս տեսակ պահանջման մի մէջ պարունակուած ապուշ խեղկատակութիւնը, անոր ներքեւ մերկապարանոց կը տեսնանք նաեւ հին թաղնուած նենգամտութիւնը :

Այսօր քաղաքական ու ընկերական աշխարհին կողմէ միահամուռ կերպով ընդռնուած կա՛մ մը կայ, որ է հայկական դատը : Արեան ճապաղիքներէ, հերոսական անձնագոհութիւններէ և բովանդակ ցեղի մը վիթխարի յռանումէն ծնաւ անիկա : Սուղ, ստորափելի սուղ գնուած իրաւունք մըն է, զոր անկարելի է ծախել : Ազգին կեանքը միշտ պիտի անխափան գոյութեանը մէջ կապրի, մինչև նպաստաւոր լուծման մը թուականը : Եւ օր մը անշուշտ այս անօրինակ դատին դատավարութիւնը տեղի պիտի ունենայ հանդիսաւորապէս, աշխարհի գերագոյն աստեղին առջև :

Արդ, երիտասարդ-թիւքերը կուզեն որ այս դատը մէջտեղէն վերնայ, դադրի գոյութիւն ունենալէ, որ պէս զի օր մը անոր երեսէն թուրքիոյ մասցածին ամբողջութիւնը վտանգ մը չկրէ : Երիտասարդ-թիւքերու խմբակը, որ շարունակ կը խրամատուի ստոր դատաւարութիւններով, հակուակ իր գերմարդկային ճիգերուն, չէ յաջողած

սակայն ցնցող դատի մը ստեղծիչն ըլլալ, նման հայկականին : Ու այս ընթացքով ամենեւին հաւանական չէ որ յաջողի իր մտադրած ձեռնարկին մէջ ապագային : Բայց եթէ ուղղակի միջոցները չեն յաջողիր, խոտոր ուղիներ երբեմն անյուսալի ելքերու կը յանդեցնեն : Այսպէս, օրինակի համար, երիտասարդ-թուրքերը հայկական կծու խնդիրը մէջտեղէն վերցնել իրենց մեթոտ ընտրած են՝ Սահմանադրութեան մը խայծը նետելով հայերուն առջև, անոնց ազգասիրական զգացումները փոխարկելով աշխարհաքաղաքացիական միտումներու, որպէս զի թուրքիան միանգամ ընդմիշտ ազատուած ըլլայ իրեն սպառնացող մեծագոյն վտանգէն :

Ասիկա է թուրք հայրենասէրներուն նենգաժէտ ծրագիրը որ, ապահովապէս, վիժման դատապարտուած ծրագիր մըն է :

* * *


Ու հիմակ այս տխմար իռօքիսները կը կարծեն հայութիւնը իր ընտրած ու հետեւած ուղղութենէն խոտորեցնել՝ փրկութեան միակ ճանապարհ ցոյց տալով « կա՛մ իրենց հետ կա՛մ Սուլթանին » . և վստահ թէ ու է համերաշխութիւն անհնար է Սուլթանին հետ, կ'երազեն հայերը և հայ յեղափոխութիւնը իրենց փարախը ձգել, ի-

րենց ցանցառ ու երերուն կարգերը անոնցմով ուժովցնելու համար :

Ինչպէս կը տեսնուի, Մուհամմատի այս ձագուկներուն քով խելքը չէ միայն որ բոլորովին կը պակօր . ամբողջ ազգի մը տառապագին հակասագիրը շահագործելու եղեռնական կամէութիւնն ու յանդգնութիւնը ունին : Թողունք ուրեմն զիրենք իրենց դարտակ ու սղորմելի դիտումներովը որո՞ճալ, շարունակել Սուլթանին դէմ իրենց մշած օտնքիչութեան պայքարին զաւելչոր, և մանաւանդ զգուշանանք մօտենալու այն գուեհիկ ծուղակին, զոր անոնք կը լարեն հայութեան շուրջը, ծուղակ մը որ ապահովապէս լրացուցիչ մասը կը կազմէ սուլթանական հայաջինջ քաղաքականութեան :

Շնորհակալութիւն իրենց սահմանադրութեան մասուցումին համար, որուն յաւէտ պէտք չունինք :

Երուանդ Մուսէօխանյեան



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԾԽՍ.ԽՈՏԸ ԵՒ ԻՐ ՎՆԱՄՆԵՐԸ



Դարերէ ի վեր գիտցուած, ճանչցուած խորտիկը չէ որ այսօր պիտի հրամցնենք ընթերցողներուս եւ ոչ ալ զայն չոր ու ցամաք ձգելու անխը-

ճութիւնը պիտի մենեհամ . ո՛չ, նո-
րութիւններ կան հաղորդելիք եւ շատ
կարեւոր նորութիւններ որոնք հա-
մեմաջուրի մը նման պիտի ճածկեն
հիները եւ պիտի կաղմնն ներկայ
քրիստոսի նիւթը, ճիշտ ինչպէս ճա-
շարաններու մէջ կը ներկայացուին
մտղէն կերակուրները իրենց համա-
նման վիճակին մէջ սակայն զանազան
ձևերու տակ եւ կամ՝ եթէ կուզէք
ուրիշ բաղադատութիւն մը, ինչպէս
գարեջրատուններու մէջ կը խառնեն
հին ու նոր գարեջուրը, յաճախորդի
մը դաւաթին տակ մնացած խմուկը՝
նորին հետ եւ մեզ կը մատուցանեն
թարթի տեղ . սակայն ես խմուկ մը չէ որ
կը ներկայացնեմ եւ ոչ ալ կերակուրի
մը աւելցուելը, այլ հին եւ նոր ու-
սումնասիրութիւններու խառնուրդ
մըն է որուն համար անշուշտ չեմ
գատապարտուիր :

Իժուար չէ հիմակուրնէ գուշտկելը
թէ կատաղի ծխամոլները պիտի նե-
ղանան, կշտամբեն զիս եւ ծուխէն,
հոտէն չախորժող ու միշտ դանգատող
կիներն ալ պիտի ներկայացնեն Ն-իւր
իրենց ամուսիններուն յանձնարարե-
լով որ ուշադրութեամբ կարգան : Ո՛-
գիտէ թերեւս պատճառ ըլլամ վիճա-
բանութիւններու, վերաւորիչ խօս-
քերու եւ . . . մինչեւ իսկ ապահար-
զանի ալ . բայց ի՞նչ կրնամ ընել .
մարդ երբեմն առանց ուղելու շատ
բաներ կընէ երբ հարկը տեսնէ, մա-
նաւանդ որ քրիստոսի նիւթ մը պէտք
էր ինձ եւ կը փափաքէի որ ա՛լ սկսիմ
զեղեցիկ սեռի ընթերցողներու հա-
ճելի ըլլալ յորմէ հետէ նախապաշա-
րումներու եւ եկեղեցիի վստահնե-
րուն մասին գրելով անհաճոյ մէկը
զարձայ, քանի որ կիմանամ թէ կը
բամբաստուիմ ալ եղեր մէկ քանի շրջա-

նակներու մէջ, հոն ուր բամբասան-
քը . . . շաքարեղէնի չափ սերելի է :

Նախ պէտք է գիտնալ թէ ծխախո-
տը անդրաջրհեղեղեան տարիք մը չու-
նի . հաղիւ 400 տարի կայ, 1518 ին,
որ գտնուեցաւ սպանիացիներուն ձեռ-
քով, Մեքսիկայի ափերուն վրայ,
Թապաքօ քաղաքին մէջ որուն անու-
նով կը ճանչցուի հին եւ նոր աշխար-
հի բնակիչներու մեծագոյն մասէն :

Ծխախոտը աշխարհի ստեղծումէն
մինչեւ այդ թուականը անծանօթ
մնալէն յետոյ տեսնելով որ այլևս
գաղտնիք մը ըլլալէ կը դադրի, կո-
րոյէ Նւրոպա անցնել եւ ճիշտ 1560 ին
Բորթուկալի ժամ Նիքօ անուն գես-
պանին ծրարներուն մէջ պահուըտե-
լով, ծովերէ եւ ցամաքներէ անդին
հին աշխարհը կը մտնայ չորցած, կո-
տըրտած եւ գրեթէ փոշիացած վիճա-
կի մէջ :

Նւրոպացիք կարծուածին չափ
փառաւոր ընդունելութիւն մը չեն
կատարեր այդ չորցած տերեւին ու
խեղճ ծխախոտը կախոսայ որ փայ-
լուն աստղի ներքեւ չէ ծներ, բայց
կը յաջողի յուզել քիմիագէտները
եւ Իբօղրատի ու Նսքիւլպի աշա-
կերտները որոնք ժողով կազմելով
կը խօսին, կը վիճաբանին եւ վերջի
վերջոյ կորոչեն փոնգտացնող դեղերու
կարգը դասել եւ հրամայել զեղադործ-
ներուն որ ունենան անկից իրենց
կրպակներուն մէջ :

Ուրեմն ծխախոտը բանաբերու-
թեան եւ յուստեհեհեհ մոռացութեան
գատապարտուած էր իբրեւ կանխա-
մտածութեամբ գործելու արամադիր
ոճրագործ մը . սակայն ժամ Նիքօ
շատ չախորժիր այս որոշումէն, կըմ-
բոստանայ կայսերական հրովարտա-
կին դէմ եւ կուզէ որ ժողովուրդը

վայելէ անոր առաւելութիւնները ու ինքը՝ իբրև առաջին օրինակը՝ կակը-սի գործածել զայն մեր այսօրուան գործածած քթախոտին ձեւովը, քթէն վեր անյագօրէն քաշելու պայմանով: Կիչ ժամանակուան մէջ ծխախոտը կը տարածուի այնքան արագութեամբ որ կայսրերը եւ պապերը տեսնելով թէ վտանգը կը յառաջանայ եւ ժողովուրդը կը թունաւորուի ժան Նիքօի պատճառաւ որուն անունովը թերեւս մկրտած են ծխախոտին ազդեցիկ թոյնը՝ նիքօթինը, կը հրամայեն որ դադրի գործածութիւնը եւ խստիւ կը բանադրուին անոնք որ կը չարունակեն անով քթերնին լեցնել մինչեւ իսկ եկեղեցիներուն մէջ:

Այն ատեն մոլիները կը դառնայնդուին, միթիւնկ մը կը գումարեն եւ պատիժէ ու բանադրանքէ զերծ մնալու համար կառաջարկեն ծխախոտը ծամելով գործածել, որուն կը յաջորդէ ծխելը եւ այսպէս կը հասնի մինչեւ մեր ժամանակները:

Մամելու սովորութիւնը այսօր մի միայն գինւորներու եւ նաւագներու մէջ մնացած է. այս վերջինները կը կարծեն թէ ծխախոտը ծամելով ազատ կը մնան ընդախտ (scurbut) անուն հիւանդութենէն — հիւանդութիւն մը որ ամբողջ մարմնոյն մէջ ալ կը գտնուի, արիւնին մէջ եւ առաջ կուգայ մանաւանդ բանջարեղէնի պակասութենէ:

Բրօֆէսօր Ֆօրթէ, Մարլպըրախ եւ անգլիացի Կառօլին իշխանուհին կատաղի ծամողներ եղած են առանց մրտածելու թէ ծխախոտ ծամելը բերնին եւ շունչին գարշելի հոտ մը կուտայ, յինտերը կը բարբոթեցնէ որոնք հետզհետէ կը քաշուին, ակռաները կը դեղինցնէ եւ սեւ ծիրով մը կը շը-

ջանակէ, կոկորդը սաստիկ կերպով կը գրգռէ, ախորժակը բոլորովին կը գոցէ, մարտդութիւնը կը խանգարէ եւ ստամոքսի ու բերնի նրբամաշկի ծանր հիւանդութիւններ կը պատճառէ:

Իսկ ծխելը, բաց ի ծամելէն առաջ եկած վտանգներէն, կը պատճառէ նաեւ սրտի բարախումներու սակաւութիւն եւ անկանոնութիւն, ուղեղի թմրութիւն, յիշողութեան, ըմբռնումի եւ աչքի ակարութիւն եւ երբեմն ալ փսխունք ու **angine de poitrine** եւ քաղցկեղ (**cancer**) հիւանդութիւնները:

Բրօֆէսօր Սէ կըսէ թէ ծխախոտը քիչ գործածելով՝ քթախոտին, նման՝ ուղեղը կը սրէ, մտածելու խօսելու եւ . . . երեւակայելու կարողութիւնները կը զօրացնէ. Տօքթօր Վիլի ալ կաւելցնէ թէ մաքին պայծառութիւն կուտայ, ձանձրոյթը կը փարատէ, երկբախտը (**nostalgie**) կը նուազեցնէ, ծերերը ու յոգնած մարդիկը կը հանգչեցնէ եւ հեռուն դառնաւ սիրելիներուն յիշատակին պատճառած տանջանքը կը մեղմացնէ ու զանոնք կը մխիթարէ:

Մեծն Ֆրէտէրիկ եւ Նարոլէոն Պոնարարթ կատաղի կերպով քթախոտը կը գործածեն եղեր եւ գուցէ այս պատճառաւ է որ Ֆրանսացի անաչառ պատմագիրները կը գտապարտեն իրենց է՛ն խելացի մարդը, կայսրութեան վերանորոգիչը որ սակայն անխոհեմութիւններով եւ մեծամոլութեան տենչով Ֆրանսայի եթէ ոչ բարոյսպէս բայց գոնէ նիւթապէս վնասակար դարձաւ:

Գթախոտը կուտայ նաեւ թմրութիւն, քուն եւ ապուշութիւն. իսկ ծխախոտը ունի մէջը թոյն մը ցիօօփիւն անունով որուն 15-30 սանթիկը մը

մարդը կը սանի լաւագոյն կեանքի մը մէջ:

Անգլիացի գիտուն մը փորձերով կը հաստատէ թէ ծխախոտը ոլորած բարակ թղթերնուս մէջ մկնդեղ (arsenic) անուէն թոյնը կայ, թէեւ քիչ քանակութեամբ, իսկ Բօմբըէլ կըսէ թէ ինչպէս ամէն ծուխի նոյնպէս եւ ծխախոտին մուխին մէջ oxyde de carbon անուէն կազը կը գտնուի եւ մեծ քանակութեամբ, այնքան որ անարիւնութիւն, ախորժակի ընդհատում եւ գլխու պոտյոտ կուտայ: Այս կազը որուն մէջ քանի հազարերորդը անգամ մլասակար է, թոքերուն միջոցաւ կերթայ կը գտնայ արիւնին կարմիր գնդիկները որոնք կանդամալուծուին եւ այլուս չկրնալով թթուածին ստանալ կը զրկուին մարմինը սնուցանելու պոշտօնէն եւ կոչնչանան. այսպէս, չսնանելով է որ ուղեղը կազդուի եւ հեռզհեռէ կը արկարանայ ու ջղային դրութիւնն ալ կը խանգարուի:

Տօքթօր Բօմբըէլ կըսէ թէ խոհարարները, արդուկողները, սրճարանի սպասաւորները եւ կեանքերնին ժամերով սրճարանին մէջ անցընող մարդիկը այս կերպով կազդուին, այսինքն oxyde de carbon էն որ ածուխին մէջն ալ կը գտնուի մեծ քանակութեամբ:

Եթէ նորութիւն մը կայ մեր ըսածներուն մէջայն ալ այս վերջի պարագան է, վասն զի կը կարծուէր թէ ծխախոտին մլասակար կողմը միայն նիֆօթի ի ներկայութիւնն է, մինչդեռ ատիկա այսօր երկրորդական կը մնայ եւ կուգայ oxyde de carbon իբրեւ սամնէն մլասակարը եւ պատճառը՝ մարդ էակին տկարանալուն եւ հիւտնոյն ցանալուն:

Անշուշտ դիտուած է որ կերակուր եփողները ախորժակնին կը կորսնցընեն եւ մենք կենթադրենք որ եփուած կերակուրին հոսն է որ կարգիլէ ուսելու. ո՛չ, սխալ մըն է ասիկա, վասն զի հաստատուած է որ արդուկողներն ալ միեւնոյն վիճակին կենթարկուին եւ հաւատարապէս տխորժակէ կը զըրկուին, ունենալով միեւնոյն տփզուութիւնը, անզօրութիւնը եւ արեան տկարութիւնը:

Եթէ միայն նիֆօթիներ ըլլար մլասակար տարրը ծխախոտին, այն ատեն պիտի յանձնարարէինք որ անպատճառ գործածուի ծակոտիէն (թըրծուած հողէ կամ écume de mer) գըլանիկ մը որ թէ պիտի ծծէր նիֆօթիներ եւ չթողուր որ բերնին հասնի եւ թէ պիտի արգիլէր ծխախոտին ուղղակի հաղորդակցութիւնը շըրթունքներուն հետ. այս պարագային մէջ հարկ էր որ գըլանիկը միշտ մաքրուէր եւ կամ ստէպ փոխուէր որպէս զի ծակոտիկները չգոցուին:

Նաեւ պիտի ըսէի որ չոր եւ միշտ լաւ ծխախոտ գործածուի, մուխը չը շնչուի, դանդաղօրէն ծխուի եւ ծըխուած միջոցին թուքը չկլլուի, սակայն այս յանձնարարութիւններուն եւ ոչ մին օգտակար է քանի որ oxyde de carbon ի գոյութիւնը հաստատուեցաւ:

Ի՞նչ ընելու է ուրեմն: Մոլիներուն համար որոնք չեն կրնար հրաժարիլ ծխախոտէն, իբրեւ զգուշութիւն առ այժմ կարելի է յանձնարարել որ նախ՝ ծխախոտը առանց թուղթի գործածեն եւ յետոյ՝ մուխը երբեք չը կլլեն եւ ջանան բաց օդի մէջ, մանաւանդ ընդարձակ սրահի մէջ ծխել:

Իսկ ամենէն առողջապահականը եւ լաւագոյն միջոցը՝ . . . չծխելն է:

Ու մտածե՛լ որ այս սողերը վերջացուցած միջոցիս բերնիս սիկարէթին մուխովը պաշարուած եմ :

Յ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Քէմախէն հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդուին՝ մէկ ժամ հետու գտնուող Մարէգ գիւղին մէջ կատարուած նոր հարստահարութեան մը մասին .

Վերջերս կէս դիշերին , թուրք խուժանը յանկարծ յարձակելով տեղւոյն քահանային տանը վրայ , անոր հարսը բռնութեամբ կը քաշէ կը տանի , երբ խեղճ կինը կը քնանար իր հարստանեկան սենեկին մէջ : Յափշտակիչներուն՝ դիւզէն հեռացած պահուն , գիւղայիք իրար կանցնին . գիւղին քէհեան անմիջապէս կառավարական պաշտօնատունը կը դիմէ ու եղբւրթիւնը կը յայտնէ . սակայն թուրք պաշտօնեաները «ստախօս կետվուր , զրպարտութիւն կընես կոր» ըսելով կը յարձակին խեղճ մարդուն վրայ , սաստիկ կը ծեծեն ու կը բանտարկեն : Յետոյ կը կանչեն գիւղին քահանան որ առեւանգութեան գէպքը կը պատմէ միեւնոյն ձեւով . ասոր վրայ

զանիկա ալ կը ծեծեն հայհոյելով ու նախաաւելով : Ս.յդ միջոցին կառավարութիւնը լուր կը շրկէ յափշտակիչներուն որ անմիջապէս տեղը դարձնեն հարսը գաղտնի կերպով . իրօք ալ խեղճ հայուհին տասերկու ժամ ետքը իր տունը կը բերուի՝ վայրագօրէն լկուած ու ուղորմելի վիճակի մէջ : Եւ ահա կառավարութիւնը կանչելով քահանան ու քէհեան ալ բերելով՝ անոնցմէ ութնական սակի սուգանք կառնէ իբրև զրպարտիչներ , և սոսկալի ծեծ մը քաշելէ ետք անոնց՝ ազատ կարձակէ : Թուրք խուժանին կողմէ հարսին առեւանգման պահուն երէցկիւնը վախէն յանկարծամահ կը լլայ :

Սակայն , քահանան , յուսակըտուր , կը դիմէ Քէմախ ընակող անպաշտօն թահիր փաշային ու եղբւրթիւնը կը պատմէ անոր . փաշան կը դիմէ էրզնկայի կառավարիչին , որ իր կարգին Պոլիս կը հեռագրէ իրողութիւնը . ասոր վրայ գոյմագամը և գոտարն պաշնանկ կը լլան :

Ուրիշ առիթներու մէջ , յիշեալ թահիր փաշան արգէն պաշտպանութիւններ ըրած է եղեր Քէմախի հայերուն :



ՐՈՒՍԵՆԻԱ

Նոյեմբեր 12 ին Բարիզի մէջ ըսկըսաւ հրատարակուիլ Ֆրանսերէն կիսամեայ հանդէս մը, Բոս Սոսնիս (Հայաստանի համար), խմբագրութեամբ Ժ. Քլէմանտոյի, Անաթօլ Ֆրանսի, Ժան Փօրէսի, Ֆրանսի տը Բրէսանէի, է. տը Ռոպէրթիի, եւ խմբագրապետութեամբ Իէոֆիլեանի:

Հրատարակագրութեան ասպարէզին մէջ տիեզերական համբաւ ու յարգանք վայելող բոլոր այս գէմքերուն յիշատակումէն յետոյ այլեւս աւելորդ կը դառնան բոլոր այն խօսքերը որոնք պիտի ծառայէին մատնանիչ ընելու այս ինքնատիպ հրատարակութեան ահագին նշանակութիւնը՝ հայ ազգին եւ հայկական դատին համար: Երևոյթը, որ առաջ կուգայ Բոս Սոսնիսի ճառագայթումովը, աննախընթաց է դժբախտ ազգերու արիւնալի տարեգրութեանց մէջ. ասկէ՛ց կը հասկցուի այն հսկայական ոճիրը, որուն զոհուած է հայութիւնը եւ որ սասանեցուցած է բովանդակ մարդկութիւնը: Մեր անօրինակ դժբախտութեանց ամէնէն տագնապալի այս շրջանին ոչինչ աւելի միտիմարիչ ու սփոփարար է քան այս կարգի համակրական ցոյցեր՝ մտաւորականութեան ու քաղաքակրթութեան ոստանէն բխած:

Խմբագրութիւնը սա յայտարարութիւնը կը դնէ թերթին սկիզբը.

«Սուլթան Ապտիւլ Համիտի հրամանով 1894, 1895 և 1896 ին կատարուած մեծ կատարածները, որոնց երեք հարիւր հազար հոգի

զոհ գացին, հազիւ կսկսին իրենց մանրամասնութիւններովը ճանչցուիլ Եւրոպա, և ոչքան ալ նոր, անոնք արդէն մոռցուած ու պատմական աղէտներու կարգը գասուած պիտի ըլլային եթէ հարկ ըլլար մոռացկոտ դիւանագէտներու խորհուրդներուն հետեւիլ:

Սակայն անկից ի վեր հայկական ցեղին մեթատաւոր բնաջնջումը առաջ կը տարուի աւելի յամբ, բայց նոյնքան ապահով միջոցներով, ու տիեզերական վատութեան հանդէպ, առաջին եղեռնագործութեանց հեղինակը կը մտածէ ամբողջացնել իր գործը և Մետաղուրի մէջ նորէն պայթեցնել սպանութիւնը, կողուպուարը, բռնաբարումը և հրգեհը:

Աջակցութեամբ Փրանսացի և օտար երեւելի աշխատակիցներու, մենք մտանայոյց պիտի ընենք գործուած վայրագութիւնները ու առանց յոգնելու պիտի յիշեցնենք Եւրոպայի թէ ինքը դաշնագրերու ուժով իբաւուհընէր ունի գործադրելիք հանդէպ Մեծ Մարգասպանին, պարտականութիւններ հանդէպ անոր խեղագարութեանը զոհերուն:

Մենք հոս ոչ խաչակրութեան սգի պիտի արթնցունենք ոչ ալ տեղութիւն պիտի գրգռենք օսմանեան հողին վրայ ապրող ցեղերէն կամ տիրող կրօնքներէն մէկուն դէմ:

Բայց եթէ պատրաստ ենք հրա-

պարակելու Սուլթանին բոլոր ոճիրները այն ցեղերուն դէմ որոնք դժխեմ բախտով մը իր հպատակները եղած են, մենք մասնաւորապէս պիտի յարինք հայկական տառապանքներուն,

Վասն զի անոնք բոլոր միւսները անհունապէս կը դեն կանցնին,

Վասն զի ամէնէն աւելի խեղացի և արեւմտեան քաղաքակրթութեան ամէնէն աւելի ընդունակ ցեղի մը համար անմիջական կեանքի ու մահու խնդիրն է ասիկա,

Վասն զի, գործնականապէս, Եւրոպա Պէրլինի գաշնագրով զինուած է վերջ դնելու համար այս սարսափներուն և պատրաստելու համար համօրէն թուրքիոյ վերականգնանութիւնը :

Խմբագրականի մը մէջ Պ. Բիէռ Գիյետա աւելի կընդլայնէ թերթին նպատակը: Կը քաղենք հետեւեալ կարեւոր մասերը.

«Մեծ կոտորածներուն յաջորդեցին մասնական ջարդերը, և անօթութեամբ ու թշուառութեամբ, օսմանեան բանտերու մէջ գաղտնի կախաղանով ու չարչարանքով ի գործ դրուած սպանութիւնները: Որպէս զի իր հայ հպատակները աւելի ստոյգ կերպով կորնչին այն հողին վրայ իսկ զոր ինք նշանակած է անոնց գիակներուն համար, Սուլթանը կարգիլէ անոնց երթեւեկութիւնը նոյն իսկ գեղէ գեղ, և եթէ պատահի որ իր կայսրութեան օ և է

մէկ նահանգին մէջ իր անձնուէր պաշտօնատարները ուղին ցորենները գրաւել կամ անոնց փոխադրութիւնն արդիլել ձմեռուընէ առաջ, յորում բոլոր ճամբաները խափանուած են, ապահովապէս հազարաւոր գժբախտներ սովամահ կ'ըլլան :

Սակայն ատեն ատեն կը պատահի որ Ապտիւլ Համիա նախամեծար համարէ կարուկ միջոցները, և ներկայ հանդէսը հրատարակելու թուն պատճառը այն է որ արդի կացութիւնը մեծապէս կը նմանի 1894-95 ի կացութեան. գիտենք թէ Սուլթանին հպատակ բոլոր ժողովուրդները կը տառապին ամենէն զարհուրելի բռնակալութեան ներքեւ ու հազարաւոր զոհեր կուտան. բայց հայ ցեղը սահմանուած է շատ մտաւոր և շատ արագ անհետացման մը եթէ քաղաքակիրթ աշխարհին մեր ուղղած կոչը անլսելի մընայ, և որովհետեւ միւս կողմէ որոշ գաշնադրեր կան որոնք ահաւորութիւնները կը պարտաւորեն միջամըտել ի նպատակ սնոր, մենք կուզենք արդիլել ոճրին ամբողջական գործադրութիւնը, ցոյց տալով անմիջական դարմանը :

Առաջիկային, մենք պիտի շատանանք՝ այժմ՝ ցոյց տրուած սկզբունքներուն համաձայն՝ պարզապէս քրններով վիշտերու երկրէն եկած լուրերը: Նոյն և առաջ պէտք է ապացուցանել 1. թէ կացութիւնը

կացութիւնը այսօր նոյն է ինչ որ էր մեծ կոտորածներէն առաջ և թէ ջարդերու տագնապ մը վերահաս է. 2. թէ Սուլթանը անձնապէս պատասխանատու է օսմանեան կայսրութեան մէջ գործուած ոճիրներուն. 3. թէ սէրուլթիւնները կրբնան վերջ մը գնել այս արիւնալի խրախճանքին՝ գործադրել տալով գաշնադրերը և պահանջելով իրենց մէջ իսկ նախատեսուած մէկ քանի նախնական բարենորոգումներու գործադրութիւնը : »

Յետոյ յօդուածագիրը զատ զատ կապացուցանէ այս երեք պարագաներուն ճշգրտութիւնը. Սպաղանքի գէպը կը նմանցունէ Սասունի կոտորածին 1894 ին. պարագաները, զորս կը թուէ, սարսուտ նոյնութիւն մը ունին մեծ կոտորածներու այդ քսամուկի նախերգանքին հետ : Անհերքելի ապացուցումներով կը հաստատէ Սուլթանին պատասխանատուութիւնը թուրքիա գործուած բոլոր ոճիրներուն մէջ. և վերջապէս մատնանիչ կընէ պարտաւորութիւնը զոր եւրոպական սէրուլթիւններն ունին միջամտելու ի նպատակ հայերուն, նախ Պերլինի գաշնադրով ու յետոյ 1895 մայիս 11ի բարենորոգմանց ծրագրով : Ու կաւելցնէ .

« Այսպէս, առաջին անգամ մը, մարտիրոս Հայաստանը լքուեցաւ իր գահիճին ձեւքը անոնց կողմէ իսկ որոնք աշխարհի առջեւ հանդիսաւորապէս յանձն առած էին պաշտպանել զոյն : Յետոյ, հակառակ կառավարութեանց շարակամութեանը ու վարձկան մամուլի

լուծեանը, եւրոպական ժողովուրդները սոսկմամբ իմացան անքաւելի սպանութիւնները : Խնդրեցինք բոլոր սրաի սէր մարդոցմէ մեզի միանալ. և անոնք կանխաւ պատասխանեցին մեր կոչն, քանի որ, օրինակի համար, Ֆրանսայի մէջ անսնուեցան իրարմէ այնքան տարբեր մարդոց գործակցութիւնը այս նպատակին համար, ինչպէս Անտթօլ Ֆրանս և Ալպէր վանտալ, Ժօրթ ֆլէմանսօ և Տընի ֆօշէն, Ժան Ժորէս և Հերվէ ար Քէրուհան, Հայր Շարմթան և Ֆրանսի ար Բրէտանսէ, Իււպէն կոհիէ և Բօլ ար Քասանեար, Լըուա-Պօլիէօ և վիրթոր Պերար, և այնքան ուրիշներ :

Նոր տագնապ մը վերահաս է. գուցէ մենէ կախում ունենայ անոր առաջքն առնել, կամ գէթ մինչեւ վերջին վայրկեանը արարաւ աշխարհի հնչեցնել անձկութեան ու անսանձ յայտի փողարը. վասն զի հայ ցեղը, դարէ դար կոտորուելով, կարծես խորհրդաւոր կենդանակաշունթեամբ մը օժտուած է... : Դարերու ընթացքին մէջ ողջ մնացած է Հայաստան. պէտք չէ որ ըսուի թէ այս ժամանակուան մարդիկը, որ ինքզինքնին քաղաքակրթուած կանուանեն, զայն թողուցին անհետանալ աշխարհի երեսէն ու մեզսակիցներն եղան Սուլթան Ապաիւլ Համիտի ու եւրոպական սէրութիւններուն : »

Գ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ը

(Վ Է Պ)

Հիւանդանոցին հրապարակին վերայ կենդանութիւնը վերակսած էր. ամէն կողմանէ գաղթականներ, գրգռւիկներու մէջ պլլուած, մսկա, դողդոջուն, ստուերներու պէս կը սահէին կանցնէին, ձգուելով դէպ այդ մութ ու տրամական հագրուանը սփոփանքի, որ հսկայ մագնէսի մը պէս հազարներով մարդկային էակներ իր բոլորախիբը կը պտըացունէր՝ հառաչանքներու, ցաւերու, կիրքերու մուլեգնոտ յորձանք մը ձեւացնելով:

Կիներու խումբը երբոր հիւանդանոցին առջեւը հասաւ, արդէն խութանի մը երեւոյթը առած էր: Կին, տղայ, աղջիկ այլանդակ խմոր մը կազմած էին: Թշուառութենէ ու դահանդանքէ կտարտած բոլոր այդ ողորմելի գանկերը ջղաձիգ, զայրացկոտ, անբան արտայայտութեամբ մը կը շարժէին: Անիրաւութեան մը դէմ բողոքելէ աւելի այդ ամբոխը կարծես ոճիր մը գործելու կերթար կոյր ու նախապաշարուած ատելութենէ մը տարուելով:

Սակայն, ներս խութելու պահոյն, ամբոխը արգելքի մը հանդիպեցաւ. դռնապանը, վիթխարի գաւառացի մը, դրանը մէջտեղը կեցած հարցուց.

— Հանրմներ, աս ատեն ո՞ւր . . . ինչո՞ւ ատանկ կը պոռաք կը կանչէք կոր . . . աստեղ ատանկ պան չըլլար . . . հա՛ նայի՛մ, հ՛տ:

— Օրբորդը պիտի տեսնանք, պոռչտացին քանի մը ձայներ:

— Տահա եկած չէ՛, պատասխանեց դռնապանը . . .

Միականի պառաւը որ խումբին մէջտեղն էր, աս ան հրելով առաջ անցաւ, ու սպառնական կեցուածքով մը լարուելով մարդուն դէմը.

— Հի՛շտ, տո՞ւն վով կըլլաս կոր, խանչեց իր բռունցքը ցուցնելով, մո՛նք ըսելիք ունինք ախճիկանը. տո՞ւն ինչ կը խառնուիս կոր:

Յետոյ, ետին դառնալով.

— Ներս չմանա՞ք, ի՞նչ սէրտէմի պէս կեցեր էք, պոռաց:

Ու ներս խութեց դռնէն, ու կիները, տղաքը, աղջիկները իրեն հետեւեցան, հրելով հրմշակելով դռնապանը, որ գաւառական ոճով հայհոյանքներու նախշուն տեղատարափ մը թափեց այդ խեղճերուն գլխուն:

Սակայն, այդ միջոցին, բակին մէջ, ուր նորեկները խոնուած էին, ուրիշ տեսարան մը կը պարզուէր:

— Նա՛, բռօզը, աղաղակեց կին մը, ալեխառն մագերով վաթսուհամայ ծերուկ մը ցուցնելով, որ հիւանդանոցին ներքին դռներէն մէկուն սև մին վրայ կեցած տաք խօսակցութեան բռնուած էր խեղճուկ գաւառացիի մը հետ: Բհնիչ Ղուկասն էր: Ձեռքը բռնած էր ծխախոտի անչահ տուփ մը, զոր դիմացինին քթին մօտեցնելով՝ տիրականօրէն կը պոռար.

— Տղաս, ասիկա Սուրբ գիրքն ալ կարդիլէ . . . մեղք է, անոր համար ասանկ էղանք: Ասանկ պտներով մեղքերնիս պիտի քաւենք: Տէրոջը խօսքը մաիկ ընելու է, հասկցա՞ր, Տէրօջը խօսքը . . .

Գաւառացին կը կմկմար, կը տատանէր, աչքը ըզձականօրէն տուփին յառած, որուն մէջի ծխախոտը ով դիտէ ի՞նչ դո՛ողութեամբ ձեւը ձգած

էր եւ զոր հիմա Ղուկաս աղան բռնի կը խլէր ձեռքէն՝ «Տէրոջը խօսքը» մէջ բերելով:

— Հէմ, ըսաւ, մարդուկին ականջին մօտենալով խորհրդաւոր ձեռով մը, օրիորդը թիւթիւն խմողներէն հազ չը'ներ, հասկցա՞ր հիմա, տղա՛ս:

— Սօն սիկառա մըն ալ, աղաս, կը պաղատէր գաւառացին ձեռքը տուփին երկնցնելով...

Սյգ պահուն կիներու խուժանը դրան առջեւ խուլ սպառնալիքներ կողզէր Ղուկաս աղան, որ բնաւ չտեսնալու ու չհասկնալու կը զարնէր, երբ կին մը յանկարծ պոռաց.

— Սա խոփածին խալիախը թէրս տառցունե՞նք, քա աղջիկներ:

Ու ամբոխը խուժեց դէպ ի դուռը, քննիչ Ղուկասին տալու համար այն դժնդակ դասերէն մէկը, որուն ելքը ամենամեծ հաւանականութեամբ չաա աննպաստ պիտի ըլլար ծերուկին համար, եթէ մարդ մը յանկարծ ամբոխը ձեղքելով ձիւտ ժամանակին վրայ հասած չըլլար վտանգէն ազատելու համար Ղուկաս աղան որ, սարսափահար, դեփ դեղին, ձեռքէն ձգած էր ծխախոտին տուփը, զոր գաւառացին առնելուն պէս անյայտացած էր իրարանցումին մէջ:

— Հանրմներ, կեցէք, խաթերս համար քիչ մը կեցէք, կը պոռար օգնութեան հասնող մարդը, որ մեր ծանօթ Գառնիկն էր եւ որ գունէն ներս հրելէ ետք ծերունին, ամբոխին գառնալով ըսաւ.

— Աս ըրածնիդ ամօթ պան է. ինչ կիւրդին խաճիկը իմանայ նէ, ալ հիչ մէկ պան մը չիտար. ետքէն ամէնքս ալ անութի կը սասկինք, հասկցա՞ք, անութի. էս կիտում ծեր ուզածը ինչ է, հիմա օրիորդը թող կայ, էս պիտի

էլլամ ծեր կողմանէ խօսիմ. գործերնուդ կուգա՞յ...

Ամբոխը, որուն կատաղութեան առաջին թափը մեղմացած էր Գառնիկին անակնկալ միջամտութեանը վրայ, իրեն ուղղուած այս առաջարկին նախ թեթեւ տրտունջներով պատասխանեց, եւ յետոյ բոլորովին համակերպեցաւ անոր:

— Բէք աղէկ սմա, ըսաւ միականի ջատուկը, ատ էխտիյարը մէյ մըն ալ մեր տուններէն ներս օտք չիպիտի կոխէ, անանկ չէ՞, աւելցուց բազմութեան դառնալով:

— Անանկ է, անանկ, պոռացին ամէն կողմէ:

Սակայն մէկէնիւմէկ ամէն աղմուկ դադարեցաւ. կառք մը, երկու խոշոր ձիերէ լծուած, բակը մտաւ ու օրիորդ Ֆրէյզըրը դուրս ցատքեց՝ թեթեւաշարժ, խնդումերեւ, եւ սիրուն:

— Օրիորդը, շնկաց ամբոխը, որ փոքր նուրբ աղջկան մը տեսքէն ցնցուած, սքլած էր, կարծես բակին մէջէն սուրացող սառն քամիին յանձնելով իր բոլոր զայրոյթն ու կատաղութիւնը:

Եւ այդ խելայեղ արարածները որ քիչ մը առաջ գուցէ ոտքերնուն տակ պիտի կոխկոտէին քննիչ Ղուկասը, եւ որ իրենց դէմ եղած կարծեցեալ անիրաւութեան ու զրկանքին մեծագոյն պատասխանատուութիւնը միս Ֆրէյզըրի կը վերագրէին, հիմակ անոր զուարթ, երջանիկ նայուածքին առջեւ, ուսկից խորունկ ներողամտութիւն մը կը կաթէր, շուարած, ափիւբերան կը մնային, մոռնալով մինչեւ իսկ քննիչ Ղուկասը:

Գանատուհին իր ճամբուն վրայ քանի մը աղաքներ շոյեց, մէկ քանի կիներու ողորիչ ու մխիթարական

խօսքեր ուղղեց ու ժողով հիւանդանոցին ներքին սրահը: Ու կիները գուր-սը մնացին, իրարու երես նայելով, չկրնալով բացատրել թէ ի՞նչպէս չէին համարձակած իրենց գանդապները չցլտնել օրբորդին, պատմել անոր քննիչ Ղուկասին շքհատակութիւնները:

Սակայն, Գաբնիկ, որ այդ ապարդիւն ցոյցին բուն թելադրիչը եղած էր, Ղուկաս աղան սրահին դռնէն ներս քայժ առենը անոր սկանջին փսփսացած էր.

— Ղուկաս աղա, ուղէի նէ աս կնիկներուն ծեծել կուտայի քեզի. կուզես նէ հիմակ ամէնը մէկանդ օրբորդին վրայ ալ վազել ասամ . . . կուզե՞ս . . .

— Չէ՛, օգլիդ պագնեմք:

— Անանկ է նէ խօսք աուր օր ուզածս պիտի ընես:

— Ծառքես էկածը կ'ընես:

— Շատ աղէկ, աս գիշեր ժամը ութնին պեսնուինք. ուղելիքս մեծ պան մը չէ. կրնաք ընել:

— Աղէկ, աղէկ, սուսն նայէ որ սա կնիկները բաթոտը չհանենք:

— Հոգ մըներ:

Գառնիկ դուրս ելլալով՝ սրահին դռանը քաջիկ հաւաքուած կիներուն լրատ.

— Հանրմիտք, պուք հիչ հոգերնիդ մընէք. քանի մը օր չքշած գործերնիդ կարգին պիտի դրուի: Հատէ էլէք տուներնիդ կազէք:

Յետոյ մտանալով Բերուզի, որ պարտխին մէջ կը գտնուէր.

— Գործերնիս աղէկ է, ըսաւ ցած ձայնով. նայէ քի աս կնիկները համոզեա տէ մէյմըն ալ հոս չիգան:

Ու խեղճ գաղթականները կորագլուխ դուրս ելան հիւանդանոցէն,

լուիկ թուռտիկ, սառնաչունչ քամիին տակ սարսուռով, ու ցրուեցան փողոցներուն մէջ, վերագոնալու համար իրենց խրճիթները, ու վերսկսելու համար գանդապները, անէժքները, լուտանքները քննիչ Ղուկասներու դէմ:

Գ.

Ղուկաս աղա այն հազուագիւտ տիպարներէն էր որոնք ընկերութեան մէջ կը պարտցունեն տգիտութեան, խորամանկութեան, կեղծիքի ու քծինքի ընթացիկ բարոյականը, գերադրական աստիճանով մը:

Ինքը կրօնքով ու արհեստով բողոքական էր: Ժամանակաւ լուսաւորչական էր սակայն. յետոյ, տեսնելով օր լուսաւորչի դաւանութեան մէջ աւոթի մնալը բան մը չէ, կից մը զարկած էր իր պատկենական հաւատքին ու քացած նետուած էր բողոքականութեան շահաւոր ասպարէզին մէջ, ուր իր յոյսերը պարսպը չէին ելած: Իր դաւանանքին ու իր համոզումներուն այս փոխանցումը այնքան դիւրութեամբ կատարած էր որքան ս եւ է գործի տէր մէկը մէկ խանութէն կելլայ ուրիշ մը կը փոխադրուի, իր ասպանքին տեսակը փոխելով, նորանոր շահերու ակնկալութեամբ: Ամենէն ապուշ, անգիտակից, բայց անխոնջ բամբուրը եղած էր «Տէրովը խօսքը» ի յաւիտենական, ըմբոստուցիչ բանածուին, զոր Պոլսոյ փողոցներուն մէջ կը պարտցունէր Սուրբ Գրքի տրցակներուն հետ, երկուքին ալ վաճառուէն դրամ՝ շահելով: Բողոքական պատուելիներու շուրջը դարձած էր տարիներով, անոնց աստիճանին հասնելու խուլ ու խելագար

ըղձանքով մը: Տանը մէջ, քարոզ սալու մարզանքներ ըրած էր, կըրկնելով, սխալ ու ծիծաղելի լեզուով մը, ժողովարանները լրած աստուածաշնչական ծթած բարբառնաքնները, ունկնդիր ունենալով իրեն խեղճ կիներն ու քանի մը զաւակները, որոնց կը ջամբէր աւետարանական զաւանութեան փրկարար քաղցրութիւնները: Յետոյ, փողոցները, ուսիկ գաւանափոխներու մութ ու մզլոտ խաւերուն մէջ, ողորմելի գանկեր, միամիտ ու պարսպ հոգիներ գտած էր զինքը ունկնդրելու մշտապարաստ, զորս խարազանած, հիացուցած ու անբանացուցած էր իր կրօնական կապիւթիւններովը, Ս. Գրոց իր սխալ ու անկեղծփեղ մեկնութիւններովը: Ժողովարաններու դրանը առջեւ, արարողութեանց աւարտումէն ետքը, իր եռանդին ու գործունէութեան ապացոյցը սալու համար պատուելիներուն, զաւանակիցներ կը ժողվէր գլխուն ու կսկսէր անոնց պարզել ինչ որ բեմէն քարոզուած էր ժողովրդեան: Ասանկով, քիչ քիչ, բաւական կարեւորութիւն ստացած էր աւետարանական շրջանակներու մէջ. այնպէս որ երբեմն իր գիւղին ժողովարանը, երբոր պատուելին բացակայ կը գտնուէր, ինքը կը կատարէր սովորական աղօթքը, սեւ բրտէնկոթի մը մէջ իր կոշտ մարմինը ձիւ, աչքերը փակ, ձայնը հանդարտ երկիւղած յուզումէ մը սրտառուչ: Ու կը պատահէր որ անիկա, աղօթքը սւարտելին յետոյ, խրատական մըն ալ վիժէր հոն, իր գլխահակ ունկընդիրներուն կոնակէն վար պաղ պաղ լեցնելով պատուելիական սառուցիկ բանաձևեր: Ղուկաս ազա հարթած էր ձամբան դէպ իր բաղձացած նպասակը, « Տէրօջը խօսք » ին հեղինա-

կաւոր թարգմանը հանդիսանալու համար, երբ յեղափոխութեան ուրականը, որուն գոյութենէն բնաւ տեղեկութիւն չունէր, բռնած էր զինքը ու իր քարոզներուն ու Ս. Գիրքերուն հետ մէկտեղ նետած էր Սեւ ծովուն եզերքը, Վառնա: Ղուկաս ազաին ձգտումներուն եւ յոյսերուն հոյակապ լատակերտին այս յեղարձ փլուզումը ցաւագին վհատութիւն մը բերած էր նախ անոր սըրտին մէջ: Իր շարաւոտ ուղեղը որ այնքան լաւ ըմբռնել կը կարծէր երկընքին ու յաւիտենական կեանքին կնճրոտ գործերը, անմատչելի ժայռի մը պէս կը քարանար յեղափոխութեան զաղափարին առջեւ, ու սրտաբուխ անէծքի մը կրակին մէջ այրած էր աս յեղափոխութիւն ըսուածն ալ, յեղափոխական կոչուած արարիւններն ալ:

Երուանդ Մեմաբէխանիան

(Նոր-նախել)



Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Կ

Մուչի առաջնորդ Բարկէն վարդապետ քրդական հարստահարութեանց դէմ բողոքած ըլլալուն պատճառաւ ձերբակալուած է:

— Երուսաղէմէն Պոլսոյ թերթերէն մէկուն կը գրեն թէ՛ վանքին միաբանութիւնը հանրագրութեամբ մը Յարութիւն Պատրիարքէն կը խնդրէ վանքին եօթնեամեայ հաշիւները ներկայացնել միաբանութեան ընդհանուր ժողովին:

— Ուրախութեամբ կը ծանուցանենք թէ Շարի, որուն խմբագրութիւնը ասկից առաջ ծանուցած էր թէ թերթը Վիեննա պիտի փոխադրուի, վերստին սկսած է լոյս տեսնալ Վառնայի մէջ, չորս գիէն արտայայտուած փափագներու ու քաջալերական հրաւերներու վրայ:

— Իշխան Գուրտոն Լուսինեան հրապարակ հանած է իր Ֆրանսահայ հսկայ բողոքքին առաջին հատորը, 1060 էջէ բաղկացած, որ կը պարուկէ Աէն մինչև Ի: Գործը պիտի ունենայ երկրորդ հատոր մը եւս, որ ի մօտոյ երեւան պիտի ելլայ:

Ա. հատորին գինն 25 Ֆրանք. երկրորդ հատորն ալ միեւնոյն գնով պիտի ծախուի:

Տարիներու ընթացքին մէջ, հրակայական աշխատութեամբ ու երկայնամտութեամբ պատրաստուած գործ մըն է Ֆրանսահայ այս բառարանը, որ պատկերազարդ ըլլալու առաւելութիւնն ալ ունի: Հայ մասնագրութեան համար գործին անփոփոխ օգտակարութեանը համոզուած ըլլալով հանդերձ, լեզուագէտ-բանասէրներու կը թողունք անոր լուրջ, մանրագին քննադատութիւնը:

Վառնաի մէջ գնել փափագողները կրնան գիտնել « Հայելի » ի խմբագրատունը, ուր կը վաճառուի:

— Պոլսոյ լրագրիները կը ծանուցանեն թէ Բնրա բնակող Բաչաւրաճը Յովհաննէս եւ Մանուկ Քիբէճճեան անուն, վիսաակար անձերը, որոնք ժամանակէ մը ի վեր հսկողութեան տակ էին, ձերբակալուեր եւ բանտարկուեր են:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ


Շարիդ իններորդ ամիսը կը թեւակոխէ, ու դեռ բաժանորդներուն մեծագոյն մասը չեն վճարած իրենց պարտքը: Խմբագրութիւնս թերթին առաջին քանի մը թիւերուն մէջ յայտարարած էր թէ անոնք որ առաջին երեք թիւերը ընդունելէ յետոյ ետ չեն դարձներ, բաժանորդ կը նկատուին. հետեւագէտ անոնք որ ութը ամիսէ ի վեր Շարիդ կ'ստանան ու կը կարգան՝ պարտաւոր են վճարել ատրեկան բաժնեգինը:

Ու է թերթի իրաւունքն է պահանջել կարգացուած թերթին բաժնեգինը, իսկ բարոյականի աէր ու է մարդու տարրական պարտականութիւնն է վճարել իր կարգացած թերթին փոխարժէքը: Երբոր այս պարտականութիւնը կանոնուի, թերթ մը լիով ազատութիւն կը վայելէ իր ուղած կերպով վարուելու իր պարտազանց բաժանորդներուն հանդէպ:

Ուստի խմբագրութիւնս կ'սպասէ որ բաժնեգիները անյատարաջ վճարուին:

Отговорникъ Н. Драгулевъ

Печатница « Ориенталъ » — Варна.



ՎԵՑԱՄՍԵԱՅ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

ԵՐԿՍԵՌ ՈՐԲԱՆՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՌՆԱՅԻ

Մ Ո Ւ Տ Ք

Ֆ. Ս.

Ապրիլ 1 էն մինչ Յուլիս 1 բաժնեգիններէ	411. 30
Ապրիլ 1 էն մինչ Յուլիս 1 նուիրատուներէ	77. 50
Տիկնանց Մասնաճիւղէն	47. 90
Յուլիս 1 էն մինչ Սեպտեմբեր 30 բաժնեգիններէ	326. 20
Եկեղեցիի մէկ սնակէն	14. 50
Տիկնանց Մասնաճիւղէն	60. 30
	<hr/>
	937. 70

Ե Լ Ք

Ապրիլ 1 էն մինչ Յուլիս 8 ընդհանուր ծախս	51. 50
Վանայ Վարազայ Վանքի Որբանոցին ղրկուած 6 Օս. մանեան ոսկի	151. 60
Սեբաստիոյ Որբանոցին ղրկուած 5 Օսմ. ոսկի	127. —
Երկրորդ եռամսեայի ծախքը	5. 60
Հաւաքիչի վարձք հարիւրին ութը	15. 30
Գանձելի ատմականեր գանձապետի մօտ	31. 20
Պատրաստ գրամ սնտուկին մէջ	555. 70
	<hr/>
	937. 70

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

✠ Վ. Ա. Ռ. Ն. Ա. ✠

Երկրորդ քաղ, Շիրչենսիա փողոց, (Մագաղղը լեշմեի կից)

Կը սպաղբուին հայերէն, պուլխարերէն, գաղղիերէն, յու-
նարէն, տաճկերէն և այլ լեզուներով այցեստան, հասցէտան,
հարստանեկան հրատիրագիր, սղգարարութիւն, նամակագրութիւն,
պահարան, մահագր, վաճառականական ամէն տեսակ գործեր,
գիրք, լրագիր, եւ այլն:

Գունաւոր և ոսկեզօծ զարդագործերու համար ամէն լեզուէ
ճոխ տասեր և մասնաւոր գործիքներ կը գտնուին:

ՄԵԾ ԽՆԱՄԲ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

ԳԻՆԵՐԸ ՅՈՅԹ ԳԻՐԳՄԱՏՅԵԼԻ

Ուրի՛ք ֆայաֆներէ եկած յանձնարարութիւններ նետ-
րեամբ եւ փութով կը կատարուին:

IMPRIMERIE ORIENTALE

ONNIK PARSEGHIAN

II Outchast, rue Chiptchenska, VARNA (Bulgarie).